



ՀԵՇԱԳԻՐՆԵՐ

Ամանորի և Ս. Ծննդեան տօներուն առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր Կողմէ
Եկեղեցւոյ Սրբազն Պետրուն յղուած են հետեւալ շնորհաւորական հեռագիրները. —

Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1981

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վաղգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան տօներու բարեբաստիկ առիթներով, խոնարհաբար
կը ներկայացնենք Զերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանու-
թեան սրտագին շնորհաւորաւթիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծեմ որ շնորհէ
Զեղ յաջողութիւններով լի երկար և առողջ կետնք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին
անսպանութիւն և բարգաւաճում:

Եղիշէ Արքեպոս. ՏիբՏէրեԱն
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1981

Նորին Սրբութիւն

Յովհաննէս - Պաղոս Բ. Պատ

Վատիկան

Ս. Ծննդեան և Նոր Տարւոյ բարեբաստիկ առիթներով, յարգանք կը ներկա-
յացնենք Զերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորաւթիւնները, մաղթելով Զեղ
շարօւնակական առողջութիւն և Զեր մեծ Եկեղեցիին՝ բարգաւաճում: Թող Ամենա-
կարողն Աստուծ յաջողութեամբ պատկէ Զեր բարի ջանքերն ու ծրագիրները:

Եղիշէ Արքեպոս. ՏիբՏէրեԱն
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 24 Դեկտեմբեր 1981

Ն. Ամենապատռութիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիայ

Մոսկվա

Ս. Ծննդեան և Ամանորի առիթներով, կը ներկայացնենք Զեղ մեր եղայրական
և ջերդ շնորհաւորաւթիւնները, սրտագին մաղթանքներով Զերդ Սրբութեան առող-
ջութեան և բարգաւաճ գործունէութեան համար:

Եղիշէ Արքեպոս. ՏիբՏէրեԱն
Պատրիարք Հայ Երուսաղէմի